



WILL LIGHTBOURNE
DIRECTOR

STATE OF CALIFORNIA—HEALTH AND HUMAN SERVICES AGENCY
DEPARTMENT OF SOCIAL SERVICES
744 P Street • Sacramento, CA 95814 • www.cdss.ca.gov



EDMUND G. BROWN JR.
GOVERNOR

Տնային օժանդակ ծառայությունների (IHSS) հարգելի մատակարար՝

Կալիֆորնիայի Սոցիալական ապահովման դեպարտամենտը (CDSS) հաճույքով ձեզ հաղորդում է, որ IHSS-ի մատակարարների համար ներկայումս հասանելի է աշխատավարձի չեկերի ուղղակի ավանդը:

Ի՞նչ է ուղղակի ավանդը:

Ուղղակի ավանդը այլընտրանքային ձև է՝ IHSS-ի մատակարարի ձեռնարկի աշխատավարձի չեկերը ստանալու համար: Ուղղակի ավանդով ձեր IHSS-ի աշխատավարձի չեկը ավանդադրվում է ուղղակիորեն ձեր չեկային կամ խնայողական հաշվին՝ ձեզ փոստով ուղարկվելու փոխարեն: Ձեր աշխատավարձը կարող է ավանդադրվել բանկային, խնայողական և փոխատվական կամ վարկային փութային ձևերից:

Ձեր վճարման հետքը չկորցնելու համար, դուք կստանաք ուղղակի ավանդի փոխանցման ծանուցում, որը նման կլինի և կպարունակի նույն տեղեկությունները, ինչ որ աշխատավարձի չափսի մասին տեղեկանքը (վճարման անդորրագիր), որը դուք ներկայումս ստանում եք, և այն կկցվի ձեր IHSS-ի մատակարարի աշխատավարձի չեկին: Ձեր վճարման անդորրագրով դուք կստանաք նաև հաջորդ վճարման շրջանի ժամանակացույցը:

Եթե դուք ցանկանում եք շարունակել ստանալ ձեր աշխատավարձի չեկերը փոստով, ձեզ հարկավոր չէ լրացնել ներփակ դիմումը կամ ձեռնարկել այլ գործողություն: Սակայն, եթե դուք ցանկանում եք, որ ձեր աշխատավարձի չեկերը ուղղակիորեն փոխանցվեն ձեր բանկին ուղղակի ավանդի միջոցով, ձեզ հարկավոր կլինի լրացնել և վերադարձնել ներփակ «Տնային օժանդակ ծառայությունների մատակարարի ուղղակի ավանդի գրանցման/փոփոխման/չեղարկման ձևը»:

Որո՞նք են ուղղակի ավանդի առավելությունները:

- ✓ Ձեր աշխատավարձի չեկերը չեն կարող կորչել փոստում կամ գողացվել ձեր փոստարկղից, դրամապանակից կամ գրպանից:
- ✓ Ձեր դրամը ձեզ մատչելի կլինի ավելի շուտ, քանի որ ձեզ հարկավոր չի լինի սպասել նամակով ստացվող չեկին:

Ո՞վ իրավունք ունի ընտրվելու ուղղակի ավանդի համար:

- ✓ IHSS-ի բոլոր մատակարարները իրավունք ունեն ընտրվելու ուղղակի ավանդի համար, եթե նրանք՝
 - ունեն չեկային կամ խնայողական հաշիվ,
 - ներկայումս ստանում են թղթե չեկեր ամսական երկու անգամ, և
 - աշխատել են IHSS ծրագրի համար առնվազն 90 օր:
 - չեն ծրագրում ուղարկել ձեր բանկում ավանդադրված գումարների 100% ԱՄՆ-ից դուրս գտնվող մեկ այլ բանկ:
- ✓ Եթե ձեր ծառայություն ստացողը ձեզ վճարում է ուղղակի կերպով (կանխավճար), դուք ընտրելի չեք ուղղակի ավանդի համար:
- ✓ Ուղղակի ավանդի համար ընտրելիի կարգավիճակը պահպանելու համար, դուք պետք է ներկայացնեք ձեր ժամանակացույցերը յուրաքանչյուր ծառայություն ստացողի համար յուրաքանչյուր վճարման շրջանի ավարտից անմիջապես հետո:

Ի՞նչ կպատահի, եթե ես դադարեմ աշխատել ծառայություն ստացողի համար:

- ✓ Այն մատակարարները, որոնք դադարում են աշխատել ծառայություն ստացողի համար, կվճարվեն ուղղակի ավանդի միջոցով, եթե ներկայացնեն իրենց ժամանակացույցը վերջին վճարման ժամանակահատվածի ավարտին հաջորդող 60 օրվա ընթացքում: **Եթե 60 օրվա ընթացքում չեք հանձնում ոչ մի ժամանակացույց, ձեր ուղղակի ավանդը ինքնաբերաբար չեղարկվում է:**
- ✓ Փոխարենը՝ դուք փոստով կստանաք թղթե չեկ այս 60 օրվա ժամանակահատվածից հետո ներկայացված յուրաքանչյուր ժամանակացույցի համար:
- ✓ Եթե ձեր ուղղակի ավանդի տրամադրումը դադարեցվել է, և դուք ցանկանում եք այն նորից գործածել, ձեզնից կպահանջեն վերագրանցվել ներկայացնելով նոր գրանցման ձև:

Ինչպե՞ս եմ ես գրանցվում ուղղակի ավանդի ծրագրում:

- ✓ Գրանցվելու համար, դուք պետք է լրացնեք ներփակ ուղղակի ավանդի գրանցման/փոփոխման/չեղարկման ձևը: Հետևեք ձևում ներկայացված ցուցումներին:
- ✓ **Խնդրում ենք նկատել, որ անհրաժեշտ է լրացնել առանձին գրանցման ձև յուրաքանչյուր ստացողի համար, ում դուք IHSS ծառայություններ եք մատուցում:** Լրացուցիչ ձևերի համար, դուք կարող եք այցելել մեր www.dss.cah-wnet.gov կայքէջը և կտտացնել “Forms/Brochure” պիտակավորված ներդիրը՝ ներբեռնելու համար գրանցման ձևը: Նախընտրության դեպքում, դուք կարող եք նաև անվճար զանգահարել Մատակարարների ուղղակի ավանդի աջակցման ծառայություն՝ (866) 376-7066 հեռախոսահամարով, և խնդրել, որ ձևն ուղարկվի ձեզ:

Ի՞նչ պետք է ես անեմ, եթե աշխատում եմ մեկից ավելի ծառայություն ստացողի համար:

- ✓ Եթե դուք աշխատում եք մեկից ավելի ծառայություն ստացողի համար և ցանկանում եք օգտվել ուղղակի ավանդից, դուք պետք է լրացնեք և ներկայացնեք առանձին գրանցման ձև ձեր աշխատած յուրաքանչյուր ծառայություն ստացողի համար, և ցանկություն հայտնեք, որ ձեր աշխատավարձը ուղղակիորեն ավանդադրվի:

Լրացուցիչ տեղեկություններ ուղղակի ավանդի վերաբերյալ

- ✓ Ուղղակի ավանդի բոլոր գրանցումները կմշակվեն մեկ կենտրոնացված վայրում: **Խնդրում ենք չզանգահարել ձեր շրջանային գրասենյակ, որովհետև նրանք չեն կարողանա ձեզ օգնել ուղղակի ավանդի գործընթացի հարցում:**
- ✓ Եթե ձեր բանկի հետ գրուցելուց հետո դուք դեռևս կունենաք լրացուցիչ հարցեր կամ խնդիրներ, կարող եք անվճար զանգահարել Մատակարարների ուղղակի ավանդի աջակցման ծառայություն՝ (866) 376-7066 հեռախոսահամարով: Մատակարարների ուղղակի ավանդի աջակցման ծառայությունը կարող է ուղարկել ձեզ լրացուցիչ ձևեր եւ օժանդակել ձեզ ձեր ձևը լրացնելու գործում:
- ✓ Երբ զանգահարում եք Մատակարարների ուղղակի ավանդի աջակցման ծառայություն, դուք ձեր առջև պետք է ունենաք ձեր IHSS աշխատավարձի չափսի մասին տեղեկանքը (վճարման անդորրագիր) կամ այլ փաստաթուղթ, որը ցույց է տալիս յուրաքանչյուր ծառայություն ստացողի անունը և գործի համարը, որի կապակցությամբ դուք զանգահարում եք: Դուք պետք է ունենաք այս տեղեկությունը, որպեսզի աջակցման ծառայությունը կարողանա ձեզ օգնել:

Ե՞րբ կփոխանցվի իմ բանկային հաշվին իմ առաջին ուղղակի ավանդը:

- ✓ Դուք կշարունակեք ստանալ թղթե չեկեր փոստով, մինչև որ կբացվի ձեր ուղղակի ավանդի հաշիվը:
- ✓ Ձեր գրանցման ձևի առաքման պահից մինչև ձեր առաջին ուղղակի ավանդադրումը կարող է տևել մինչև 60 օր:

Ի՞նչ կպատահի, եթե ես փակեմ իմ հաշիվը կամ փոխեմ իմ բանկը:

- ✓ Անմիջապես անվճար զանգահարեք Ուղղակի ավանդի մշակման կենտրոն՝ (866) 376-7066 հեռախոսահամարով, ձեր հաշվեհամարի կամ բանկի փոփոխման դեպքում: Ձեզ հարկավոր կլինի լրացնել և ստորագրել ուղղակի ավանդի գրանցման/փոփոխման/չեղարկման նոր ձև: Ուղղակի ավանդի մշակման կենտրոնը կարող է ուղարկել ձեզ նոր ձև, կամ դրանք հասանելի կլինեն ձեզ, եթե այցելեք վերևում նշված կայքէջը: Վերադարձրեք լրացված ձևը Մատակարարի գրանցման մշակման կենտրոն P. O. 1120, Roseville, CA 95678 հասցեով:
- ✓ **Մի՛ փակեք ձեր հին հաշիվը, մինչև չստանաք ձեր առաջին վճարումը ձեր նոր հաշվին:**